



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

« 11 » մայիսի 2020 թվականի N: 135-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ Ն.Ա.ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԶԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N:992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 6-րդ և 7-րդ կետերի դրույթներով.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Ձևավորել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2020 թվականի մայիսի 12-ին անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է!



Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի  
2020 թվականի մայիսի 11-ի N: 135-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ «ԳՅՈՒՄՐՈՒ  
Ն.Ա.ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՅԻՍԻ 12-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- |                    |   |
|--------------------|---|
| Արամ Անտոնյան      | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ, հանձնաժողովի նախագահ,            |
| Հովհաննես Մաթոսյան | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական,  |
| Տիգրան Մինասյան    | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի խորհրդական,  |
| Գրիգոր Պապոյան     | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի քարտուղարության պետ,   |
| Զորիկ Խաչատրյան    | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ,  |
| Մուշեղ Մարգարյան   | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի պետի ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող, |
| Սամվել Գրիգորյան   | - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար:                                      |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

